ՏՐԱՆՍ ՆՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍԵՊՏԵՄԲԵՐ - ՀՈԿՏԵՄԲԵՐ 2020թ.

№14

ՏՐԱՆՍ ՃԱՄԲԱՐ 5----------2
ԱՄՍԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ----------6
CHRISMON EVANGELISCH MAGAZINE-Ի ԱՆԴՐԱԴԱՐՁԸ
ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ՀԵՏ----------7
ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԳՈՐԾԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է----------12
«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ն ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է
ԱՆՑԿԱՑՆԵԼ ԿՐԹԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵԲԻՆԱՐՆԵՐԻ ՇԱՐՔԸ----------13
ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԸ ----------14

ՏՐԱՆՍ ՃԱՄԲԱՐ 5

Բարդ ժամանակներ են բոլորիս համար: Սակայն տրանս անձիք բախվեցին առանձնակի ծանր բարդությունների: ՔՈՎԻԴը բերեց նոր ռիսկեր՝բարդացնելով տրանս անձանց իրավիճակը կյանքում: Սակայն պահպանելով ՔՈՎԻԴԻ անվտանգության բոլոր կանոնները, «Իրավունքի Կողմ» ՀԿի ամբողջ թիմը քաղաքի հանգստյան գոտիներից մեկում իրականացրեց թվով հինգերորդ տրանս ճամբարը՝ կարևորելով տրանս անձանց առողջությունը,կրթությունը և իրազեկվածությունը այս դժվար շրջանում:
2020թ օգոստոսի 24-26ը մեկնարկեց «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի կողմից կազմակերպվող 5-րդ «Տրանս ճամբարը», որին մասնակցեցին Տրանս ԼԳԲԻՔ+ անձինք և նրանց իրավունքների համար պայքարող ակտիվիստներն և համախոհները:
Դասընթացը կրում էր ուսուցողական բնույթ՝ նպատակ ունենալով նպաստել տրանսգենդեր համայնքի կրթական կարողությունների զարգացմանն ու մոբիլիզացիային,քաղաքացիական, սոցիալ-մշակութային և հասարակական կյանքում նրանց ակտիվ ներգրավվածությանն ու մասնակցայնությանը, տրանս անձանց իրավունքների պաշտպանության ջատագովությանը թե ընտանիքներում, թե աշխատավայրում, և իհարկե խարանի և խտրականության նվազեցմանը:

Դասընթացի առաջին օրը բացման խոսքով հանդես եկավ «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի հիմնադիր նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, նա ողջունեց մասնակիցներին, իր երախտագիտությունը հայտնեց նրանց ճամբարին մասնակցելու համար, երաշխավորելով, որ դասընթացներից հետո մասնակիցները կհեռանան նոր գիտելիքներով, ակնկալիքներով և հեռանկարներով: Մասնակիցները նախ ներկայացրեցին իրենք իրենց և ծանոթացան միմյանց հետ: Նրանք սահմանեցին եռօրյա ճամբարի կանոնները եւ արտահայտեցին իրենց սպասելիքները և վախերը ճամբարի ընթացքում:

Ողջույնի խոսքից հետո մասնակիցները բուռն քննարկում ծավալեցին: Դասընթացի առաջին օրը քննարկվեց «Սեռականություն» թեման, ծանոթացան սեռականության հիմնական հասկացությունների հետ, ինչպիսիք են՝ կենսաբանական սեռը, սեռական վարքագիծը, գենդերը, սեռական կողմնորոշվածությունը, ծանոթացան սեռական կողմնորոշվածության և գենդերի տեսակներին, հիմնական թեմային զուգահեռ մասնակիցները սովորեցին ինչպես ձեռք բերել վերլուծական մոտեցում ցանկացած հարցին առավելագույնս հիմնավորված պատասխան տալու համար՝ հիմնվելով սեփական, հանրային և միջազգային փորձի վրա: Դասընթացը մասնակիցներին հարստացրեց կենսական կարևոր գիտելիքներով և նպաստեց մասնակիցների միջև վստահության ձևավորմանը, ինչպես նաև միջհամայնքային ցանցի ստեղծմանն ու համագործակցությանը: Օրվա ավարտին մասնակիցները դասընթացավարների և Լիլիթ Մարտիրոսյանի հետ ամփոփեցին և գնահատեցին ստացած գիտելիքները:

Երկրորդ աշխատանքային օրը սկսվեց նախորդ օրվա ամփոփմամբ, ինչպես նաև մասնակիցները սովորեցին, թե ինչպես գտնել նոր համագործակցության եզրեր, կազմակերպել դրամահավաքներ, հայթայթել անհրաժեշտ ռեսուրսներ, գնահատել ռիսկերն աշխատավայրում և ընտանիքում, և թերևս ամենաարդիականը, թե ինչպես արձագանքել և կանխել հարձակումները տրանս անձանց հանդեպ: Կատարվեցին խմբային աշխատանքներ քննարկված թեմաներով և ներկայացվեցին միմյանց բուռն քննարկման ձևաչափով: Հատկանշական է, որ ճամբարին ներկա էին նաև Տրանս ԼԳԲԻՔ+ անձանց ծնողները, որոնց հետ քննարկեցին համերաշխությունը ընտանիքում և այլ հարակից թեմաներ: Ծնողներն ավելի մոտիկից առնչվեցին իրենց երեխաների առաջ ծագած խնդիրներին, որի արդյունքում ծնողներն ավելի ապրումակցող մոտեցում ձևավորվեցին երեխաների հանդեպ: Օրվա վերջում ստեղծվեցին տնային աշխատաքային խմբեր և կատարվեց օրվա գնահատում ամփոփելով ստացված գիտելիքները:

Երրորդ օրը նույնպես սկսվեց նախորդ օրվա ամփոփմամբ, այնուհետև նախատեսված էր «Համայնքային նախաձեռնությունների» հարթակի ստեղծում և քննարկում, որը վարում էր տրանսգենդեր ակտիվիստ Լիլիթ Մարտիրոսյանը: Վերջինս ներկայացրեց իր և ԻԿՀԿ թիմում աշխատող այլ ԼԳԲՏԻՔ+ ակտիվիստների անհատական պատմությունները, հետագա քայլերը և խրախուսեց նոր ակտիվիստների և համախոհների ներգրավումը համայնքային նախաձեռնությունների ստեղծման և զարգացման նպատակով: Հաջորդիվ քննարկվեց անվտանգության և մասնավորապես անհատական և համայնքային անվտանգության կարևորությունը: Մասնակիցները խոսեցին ռիսկերի գնահատման և սպառնալիքներից խուսափելու հնարավոր տարբերակների մասին:

Լիլիթ Մարտիրոսյանը նշեց, որ տրանս ճամբարը կկրի շարունակական բնույթ, որպեսզի օժանդակի համայնքի մոբիլիզացիային և ինքնօգնության խմբերի ձևավորմանը առաջիկայում ստեղծելու ավելի ամուր տրանս համայնք ամբողջ Կովկասյան տարածաշրջանում: «Ճամբարը լինելու է շարունակական, քանի որ տարիների ընթացքում կազմակերպված ճամբարները ապացուցել են, որ իրականանում է լավագույնը տրանս անձանց համար, և կա անհրաժեշտություն շարունակել նույն ոգով: Լավագույն ապացույցն է, որ տարեցտարի ավելանում են դիմորդների քանակը, օրինակ այս տարի երեսուն տեղի համար դիմել էին մոտ ութսուն անձիք»,-նշեց Լիլիթ Մարտիրոսյանը: Վերջինս խոսեց նաև ակտիվիստների հոգեբանական առողջության մասին, ինքնախնամքի, ակտիվիստների այրման պոցեսների/բըրն աութ/-ի մասին: Լիլիթ Մարտիրոսյանը մասնակիցներին հանձնեց Ճամբարի մասնակցության վկայականներ, ինչպես նաև ընտրվեցին կամավորներ, որոնք ստացան խրախուսական նվերներ՝ ճամբարի լավագույնս իրականացմանն օգնելու համար:

Դասընթացի ավարտին Լիլիթ Մարտիրոսյանը մեկ անգամ ևս շնորհակալություն հայտնեց դասընթացը ֆինանսավորող կազմակերպությանը, մասնակիցներին, դասընթացավարներին և ԻԿՀԿ ողջ անձնակազմին:

Մասնակիցներից մի քանիսը մեծ ցանկություն արտահայտեցին կիսվելու իրենց կարծիքներով և զգացողություններով ճամբարի մասին:

«Կյանքումս շատ դժվարություններ եմ ունեցել: Թերևս ամենադժվարն այն էր, երբ իմ գենդերային ինքնության համար ինձ փակեցին տանը: Ես սկսեցի հակասել ինքս իմ ներքին եսին: Դժվար էր, ինչ խոսք, սակայն հիմա ես այստեղ եմ ու հպարտ, որ մասնակցում եմ տրանս ճամբարին և կարող եմ այս ամենով կիսվել ձեր հետ» — Տրանս կին 23 տարեկան:

«20 տարեկան եմ, բոլորն էլ անցնում են դժվարությունների միջով, և ես բացառություն չեմ: Սակայն իմ դեպքում ծնողներս, կոնկրետ մայրս գտնվեց շատ տոլերանտ իմ հանդեպ և ընդունեց ինձ էնպիսին, ինչպիսին որ կամ»: —Տրասնգենդեր տղամարդ ակտիվիստ:

«Սա պարզապես անփոխարինելի հարթակ էր, որտեղ ես ճանաչեցի իմ խնդիրները կիսող մարդկանց, հիմա գիտեմ, որ մեր իրավունքների համար պայքարում էլ մենակ չեմ» — Տրանսգենդեր կին:

«Ես ցանկանում եմ, որպեսզի նման գիտելիքահեն հավաքներն ավելի հաճախ կազմակերպվեն: Չլինելով ԼԳԲՏ+ համայնքի անդամ, հասկանում եմ, թե որքան կարևոր և ուսուցողական են այսպիսի հավաքները հենց համախոհների համար» — Տրանս համախոհ:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան Հասարակական Կազմակերպությունը իր խորին շնորհակալությունն է հայտնում ծրագիրը ֆինանսավորող կազմակերպությանը տրանսգենդեր անձանց իրավունքների պաշտպանության ջատագովությունն ԻԿՀԿ-ին վստահելու համար: ԻԿՀԿ-ն իր խորին շնորհակալությունն է հայտնում նաև բոլոր մասնակիցներին և հույս հայտնում մոտ ապագայում տեսնել նրանց տրանս անձանց իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ակտիվիստների առաջնագծում:

Ամսական միջոցառումների ժամանակացույց

01.09.2020թ - 30.09.2020թ

	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը
1.1	«ՄԻԱՎ/ՁԻԱՀ, սեռավարակներ»	15.09	15:00
1.2	«Ինչպես ջատագովություն իրականացնել առողջության իրավունքի վերաբերյալ»	15.09	16:00
2.1	«Մեր կարիքներն ու խտրականության դեպքերը համավարակի ընթացքում»	16.09	14:00
2.2	«Իրավաբանական խորհրդատվություն»	16.09	16:00
3.1	«Առողջության իրավունք»	18.09	16:00
3.2	«Իրավաբանական խորհրդատվություն»	18.09	16:00
4.1	«ֆոբիաներ և փոխօգնություն»	23.09	14:00
4.2	«Իրավաբանական խորհրդատվություն»	23.09	16:00
5.1	«Ինչ է ինքնախարանը և ինչպես կանխել այն»	24.09	15:00
5.2	«Իրավաբանական խորհրդատվություն»	24.09	16:00

#RightSideNGO #Transgender #LGBTIQ #Իրավունքի Կողմ

Սիրելի՛ ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ+ համայնք, ուրախ ենք տեղեկացնել, որ «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան Կազմակերպության համայնքային կենտրոնը սկսում է կրկին ակտիվ աշխատել՝ իրականացնելու համայնքային միջոցառումներ տարբեր թեմաների շուրջ, ինչպես նաև տրամադրել իրավաբանական խորհրդատվություն այն ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ+ անձանց, որոնք ունեն դրա կարիքը:

Կարևորել անձանց առողջության իրավունքը և հաշվի առնելով երկրում արտակարգ դրությունը, անհրաժեշտ ենք համարում գրասենյակի տարածքում և համայնքային կենտրոնում իրականացվող միջոցառումների ընթացքում պահպանել հակահամաճարակային կանոնները՝ կրել դիմակ, պարբերաբար ախտահանել ձեռքերը և պահպանել սոցիալական հեռավորություն:

ՏՐԱՆՍ ԼԳԲԻՔ+ համայնքի իրազեկվածության մակարդակը բարձրացնելու, խնդիրներին լուծումներ տալու, իրավաբանական աջակցություն տրամադրելու համար «Իրավունքի Կողմ» իրավապաշտպան Հասարակական Կազմակերպությունը նոր թիմով և նոր ծրագրերով իրականացնում է կրթատեղեկատվական միջոցառումներ, խորհրդատվություններ, քննարկումներ:

Կազմակերպության առաքելությունն է հասնել ԼԳԲՏԻՔ+ անձանց բարօրությանը, պաշտպանվածությանն ու հավասարությանը: Մեր
արժեքներն են բազմազանությունը, մարդու իրավունքները, սոլիդարությունը, ինչպես նաև ժողովրդավարությունը:

CHRISMON EVANGELISCH MAGAZINE-Ի ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ԼԳԲՏԻՔ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ ԱԿՏԻՎԻՍՏՆԵՐԻ ՀԵՏ

2020 թ. -ի օգոստոսի 8-ին

2020 թ.-ի օգոստոսի 8-ին Chrismon Evangelisch Magazine-ն անդրադարձ է կատարել ԼԳԲՏԻՔ անձանց իրավունքներին Հայաստանում՝ հարցազրույց վերցնելով մի քանի հայ ԼԳԲՏԻՔ ակտիվիստներից: Հոդվածում քննարկվել են ԼԳԲՏԻՔ մարդկանց իրավունքներն ու նրանց զգացողությունները հայաստանյան հայրիշխան հասարակությունում: Սակայն մինչև բուն հարցազրույցներին անցնելը, օրաթերթում արտացոլվում է հայ հասարակության մեծամասնության դիրքորոշումը ԼԳԲՏԻՔ հիմնահարցերին: Հայաստանն աշխարհի այն երկրներիցէ, որտեղ տրանս մարդիկ ամենաշատն են խտրականության ենթարկվում և հետապնդվում: Այնինչ Հայաստանը համարվում է Արևմտյան Եվրոպայի մաս, ժողովրդավար երկիր, իսկ հայերը միշտ հպարտանում են առաջին քրիստոնյա երկիրը լինելու համար: Սակայն մարդկանց մեծամասնության մտածելակերպն այնքան հետադիմական է, որ մերժում է ԼԳԲՏԻՔ անձանց գոյը՝ հիմնավորելով, որ «մեզ ընտանիքներ են պետք, որտեղ կծնվեն ապագա զինվորներ, քանի որ հակառակ դեպքում Ադրբեջանը կկործանի մեզ»:

Եվրոպական 49 երկրների ԼԳԲՏԻՔ միջազգային ասոցիացիայի կողմից անցկացված ուսումնասիրության արդյունքում ԼԳԲՏԻՔ մարդկանց նկատմամբ հետապնդումների և խտրականության ցուցանիշով Հայաստանը զբաղեցնում է 47-րդ տեղը: Միայն Ռուսաստանում և Ադրբեջանում է իրավիճակն էլ ավելի վատ: Հայաստանում այլևս անօրինական չեն նույնասեռ հարաբերությունները և անվանափոխությունը: 2015 թվականից ի վեր տրանս անձանց հաջողվել է փոխել իրենց անունները՝ առանց անձնագրային սեռը փոխելու: Բայց այլ գենդերային ինքնությամբ մարդկանց մերժումը դեռ արմատական է և դեռևս անընդունելի է հայրիշխան, միլիտարիզացված հայ հասարակության մեծամասնության կողմից: 2014 թ.-ին Եվրոտեսիլ երգի մրցույթում հաղթեց Կոնչիտա Վուրստը, և Հայաստանից ներկա երգիչ և հետագայում նաև մրցույթի դատավոր Անուշ Արշակյանն, ով Ինգա և Անուշ Արշակյաններ հայտնի դուետից էր, ասաց. «Ես այդ երևույթը զզվելի եմ համարում, ճիշտ այնպես, ինչպես որ խելագարությունը»: Ավելի ուշ Անուշը ներողություն է խնդրել իր կատարած հայտարարության համար:

Սակայն միևնույնն է, այսպիսի նախադասություններն են, որ մխրճվում են մարդու լեզվամտածողության մեջ՝ ստեղծելով պարարտ հող ԼԳԲՏԻՔ անձանց հանդեպ խարանի և խտրականության համար: Նման մտածելակերպը կարող է հանգեցնել նաև ատելության հիմքով հանցագործությունների թվի աճին, ինչպես որ եղավ 2018-ի ամռանը Շուռնուխ գյուղում, երբ բնակիչները հարձակվեցին մի խումբ ԼԳԲՏԻՔ մարդկանց վրա, և մինչ ոստիկանության ժամանումը ԼԳԲՏԻՔ երիտասարդները ավելի քան մեկ ժամ հետապնդման և հարձակման էին ենթարկվել, կային բազմաթիվ տուժածներ: Վիճակագրորեն, աշխարհում գրեթե ամեն օր տրանսգենդեր մարդ է սպանվում: Ակտիվիստների հաշվարկների համաձայն՝ վերջին երկու տարվա ընթացքում ամբողջ աշխարհում տեղի է ունեցել 700 տրանսսեքսուալների սպանություն: Հանուն մարդու իրավունքների քարոզարշավը հայտնել է, որ միայն ԱՄՆ-ում անցյալ տարի 26 տրանս մարդ է սպանվել:

Ամփոփելով ընդհանուր իրավիճակը՝ հարցազրույցը շարունակվել է ակտիվիստների հետ իրենց կյանքի պատմություններով: Նախ հարցազրուցավարը խոսել է «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի նախագահ Լիլիթ Մարտիրոսյանի հետ: Լիլիթ Մարտիրոսյանը գերմանական օրաթերթին պատմել է, որ ինքը պետք է զգույշ լինի, շատերն են իրեն ատում: «Գրեթե ամեն օր, ինչ-որ տեղ աշխարհում, ինչ-որ մեկին սպանում են պարզապես այն պատճառով, որ նա տրանսգենդեր է»,- հավելել է Լիլիթը: Նա առաջին տրանս կինն էր, ով ելույթ ունեցավ ՀՀ խորհրդարանում՝ իր խոսքով պաշտպանելով ԼԳԲՏԻՔ անձանց: Դրանից հետո նա ատելության և մահվան սպառնալիքների հաղորդագրություններ է ստացել: ԱԺ-ում իր ելույթից հետո քահանա Պետրոսյանը հրապարակավ կոչ է արել մահապատժի ենթարկել իրեն և իր նման տրանսգենդերներին իրենց գենդերային ինքնության համար: ԲՀԿ պատգամավորը լրատվամիջոցներին բացատրում էր, որ չի կարելի տղամարդկանց խառնել կանանց հետ, քանի որ դա ամոթալի է: Խորհրդարանում իր երեք րոպենանոց ելույթում Լիլիթը փաստերով ու թվերով նկարագրել է Հայաստանում ԼԳԲՏԻՔ գենդերային ինքնություն ունեցող մարդկանց հանդեպ խտրականության, խարանի և հետապնդումների դիսկուրսը: Ելույթից հետո ատելության և սպառնալիքների ահռելի ալիքը փլուզվեց Լիլիթի գլխին: Խորհրդարանի նախագահ Նաիրա Զոհրաբյանը Լիլիթին մեղադրել է ԱԺ «օրակարգը խախտելու» և «չհարգելու» մեջ: Դրանից անմիջապես հետո Լիլիթի ֆեյսբուքյան էջում հայտնվեցին հերթական մահվան սպառնալիքներով լի հաղորդագրությունները: Իրավիճակն էլ ավելի վատթարացավ, երբ համացանցում հրապարակվեց նրա բնակարանի հասցեն: Զայրացած ամբոխը հավաքվել էր նրա տան դիմաց՝ վիրավորանքներ և սպառնալիքներ հնչեցնելով: Իրավիճակը սրվել էր առ այն, որ Եվրամիության և ՄԱԿ-ի ներկայացուցիչները նախազգուշացրին Հայաստանում «ատելության խոսքի և բռնության աճի» մասին: Նախ Լիլիթը ստիպված էր թաքնվել Հայաստանում, այնուհետև, մի քանի շաբաթ օթևանել արտերկրում:

Chrismon Evangelisch Magazine-ըհարցազրույցն անցկացրել է «Իրավունքի կողմ» ՀԿ-ի գրասենյակում, որը Լիլիթը հիմնադրել է տրանսգենդեր անձանց իրավունքների պաշտպանության համար: Լիլիթը, նստելով իր գրասեղանի ետևում, պատմեց իր կյանքի պատմությունը: Նա մեծացել է Երևանից մի քանի ժամ հեռավորության վրա գտնվող գյուղում: Լիլիթը չի ուզում ասել այդ վայրի անունը՝ իր ընտանիքը պաշտպանելու համար: Հայրը՝ հողագործ է, մայրը՝ տնային տնտեսուհի: «Ամեն ինչ շատ ավանդական է եղել», – ասում է նա: Լիլիթը տասը կամ տասնմեկ տարեկան հասակում սկսում է թաքուն հագնել մոր հագուստները, ընտանիքը նրան է, այդ ցանկությունը միայն նրա գլխում է: Լիլիթը պատասխանում է. «Ոչ, ես կին եմ, ես դա զգում եմ»: Իրավիճակն ամեն օր ավելի է վատանում, մինչև Լիլիթը 13 տարեկանում փախչում է տնից: Նա ճանապարհ է ընկնում դեպի Երևան՝ ծնողներին ասելով, որ աշխատանք է գտել: Իրականում նա ստիպված էր սեքս աշխատանքով զբաղվել գոյատևելու համար: Լիլիթը բնակարան էր գտել, որտեղ ապրում էր այլ տրանսգենդեր կանանց հետ, ովքեր նույնպես զգում էին, որ իրենք սխալ մարմնում են ծնվել: Կյանքը դժվար է. ոչ ոք տրանսսեքսուալներին չի վերցնում աշխատանքի, քանի որ հակառակ դեպքում հայրիշխան հասարակության բողոքը չափազանց մեծ կլինի: Երիտասարդ տրանս կինը ստիպված է եղել փողոցում աշխատել: Լիլիթին ծեծել ու վատ են վերաբերվել,նույնիսկ դանակով սպառնացել են նրան: Բարեբախտաբար, սենյակակիցները լսել են նրա ճիչը և հասել են օգնության: Այնուամենայնիվ, այս տարիները նրա համար ազատագրման ժամանակաշրջան են եղել, ինչպես որ պատմեց Լիլիթը: Այժմ նա ապրում է որպես տրանսգենդեր անձանց իրավունքների համար առաջնագծում պայքարող ակտիվիստ և կայացած կին: Սակայն նա նշեց, որ հորմոնոթերապիայի հետ կապված շատ խնդիրներ կան, քանի որ Հայաստանում չկան բժիշկների կողմից հաստատված անհրաժեշտ հորմոններ:

Լիլիթը խտրականության է ենթարկվել հայաստանյան բժիշկների կողմից ևս, քանի որ նրանք հրաժարվել են կատարել նրա սեռափոխության վիրահատությունը և Լիլիթը ստիպված է եղել Ռուսաստանից վիրաբույժ հրավիրել, քանի որ հայ վիրաբույժի համար բարդ էր կոտրել տաբուն՝ սեռափոխություն կատարելով: Լիլիթի վիրահատությունները տեղի են ունեցել գաղտնի, գիշերը՝ 2015 թ.-ի Սուրբ Ծննդյան օրվանից անմիջապես հետո: Լիլիթը իր ողջ խնայողությունները զոհաբերել է վիրահատության համար: Դա Հայաստանում սեռափոխության երրորդ վիրահատությունն էր: Թե որտե՞ղ են տեղի ունեցել գործողությունները և թե ո՞վ է նրան խնամել, Լիլիթը գերմանական օրաթերթին բացահայտել չի ցանկացել՝ նշելով, որ ինքը պետք է իրեն պաշտպանի: 2019 թ. ապրիլի 5-ից ի վեր՝ Լիլիթի խորհրդարանական ելույթից հետո, նա իր աշխատակից ընկերների և ընտանիքի անդամների հետ մեկտեղ ստացել է սպառնալիքներ՝ «Քեզ այրելն էլ քիչ է», «Մահապատիժ»: Լիլիթը նաև նշեց, որ ինքը ցանկանում է մնալ Հայաստանում: Իր՝ խորհրդարանական ելույթից հետո նա ստիպված էր փախչել և երկու շաբաթ արտերկրում օթևանել; Լիլիթը պատմեց, որ մի պահ նա մտածել է ընդմիշտ մնալ արտերկրում: Հետո վերադարձել է Երևան, չցանկանալով փախստական դառնալ, քանի որ սա նաև իր երկիրն է: Իր ընկերներն այստեղ են ապրում, և նրանք շարունակում են ենթարկվել խտրականության, այդ իսկ պատճառով նա ամեն օր հանդիպում է իր գործընկերների հետ իրենց փոքր գրասենյակում՝ աջակցելու տրանսգենդեր համայնքին: Հարցին, թե ինչ պետք է փոխվի Հայաստանում, Լիլիթը պատասխանել է, որ իրենց պաշտպանող օրենքներ չկան, իրենց համար հորմոններ չկան, ինչպես նաև չկան բժիշկներ և կլինիկաներ, որտեղ իրենք կկարողանան վիրահատվել: Լիլիթը ցանկանում է դրա համար մինչև վերջ պայքարել:

Օրաթերթը հարցազրույց անցկացրեց նաև տրանս մոդել Մոնիկա Սարկիսյանի հետ: 2019-ի հունիսին նա հարձակման էր ենթարկվել, Երևանի կենտրոնում ամբոխը շրջապատել էր նրան: «Դա նրանցից մեկն է: Այրեք»,- մի կին բղավել է, երբ Մոնիկան քայլելիս է եղել Երևանի կենտրոնում: Նա միշտ իր հետ ունի շոկեր ատրճանակ: Մի մարդ վազել է դեպի Մոնիկան, քաշքշել նրա զգեստը՝ բղավելով. «Հանիր զգեստդ. ապացուցիր, որ կին ես»: Ամբոխը հարձակվել է նրա վրա: Պաշտպանվելու համար Մոնիկան հանել է շոկեր ատրճանակը, օդում պահելով հետ մղել մարդկանց: Նա ստիպված է եղել միշտ կրել այն իր պայուսակում: Ավելի ուշ, երբ ոստիկանությունը եկել է, միայն Մոնիկային են իրենց հետ տարել ոստիկանական բաժանմունք: Մոնիկայի հետ ամսագիրը հարցազրույցն անցկացրեց օպերայի հարակից սրճարանում: Մատուցողուհին նյարդային խաչակնքվեց՝ տրանս կնոջը տեսնելով: Հարցազրույցի ընթացքում նա և սրճարանի մյուս տղամարդիկ ցույց էին տալիս Մոնիկային և ծիծաղում նրա վրա: Մոնիկան անտեսում էր ծաղրը, որին առերեսվում է գրեթե ամեն օր: Նա շատ ավելի խորը վերքեր ունի: Մոնիկայի ծնողները և եղբայրները հրաժարվել են նրա հետ կապ պահպանելուց, և քանի որ նա աշխատանք չի կարողանում գտնել գոյատևելու համար կախված է «մի քանի տղամարդու աջակցությունից»: Նա ավելին չի ուզում մանրամասնել: Դեռևս մանկուց Մոնիկան մոդել դառնալու երազանք ունի: Վերջերս նա առաջարկ ստացավ մասնակցելու America’s Next Top Model-ի ուկրաինական հաղորդմանը: Բայց ճանապարհորդությունը չեղյալ հայտարարվեց Կորոնավիրուսի պատճառով: Փայլփլող աչքերով նա խոսել է միջազգային նորաձևության ապրանքանիշերի՝ ինչպիսիք են Gucci, Versace, Dolce & Gabbana-ի մասին: «Իմ նպատակն է լինել տրանս կանանց դեմքը»,- ամփոփեց Մոնիկան:

Հաջորդ ԼԳԲՏԻՔ ակտիվիստը, ում հետ հարցազրույց անցկացվեց Մամիկոն Հովսեփյանն էր: Մամիկոնը պարբերաբար մահվան սպառնալիքներ է ստացել, քանի որ նա, լինելով «ՓԻՆՔ Արմենիա» հասարակական կազմակերպության ղեկավարը, հանդես է գալիս ՀՀ-ում ԼԳԲՏԻՔ անձանց իրավունքների պաշտպանությամբ: Հարցերին պատասխանելուց առաջ Մամիկոն Հովսեփյանը խորը շունչ քաշեց, քանի որ 37-ամյա երիտասարդը գիտի, թե ինչ է նշանակում հասարակությունից դուրս մնալը:«Ատելությունը դարձել է մեր ազգային ավանդույթի մի մասը: Եթե դուք չեք ատում, նշանակում է, որ իսկական հայ չեք»,- նշել է Մամիկոնը:

Փաստահավաք պատմությունները ևս մեկ անգամ ապացուցում են, որ Հայաստանում պահպանողական հասարակությունը դեռ ամբողջապես պատրաստ չէ ընդունելու ԼԳԲՏԻՔ անձանց և հարգել նրանց իրավունքները, ինչպես որ պետք է լինի իրավահավասար և ժողովրդավար երկրում: Ամբողջական նյութին կարող եք ծանոթանալ այստեղ:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն և Լիլիթ Մարտիրոսյանն իրենց շնորհակալությունն են հայտնում Chrismon Evangelisch Magazine-ին Հայաստանում ԼԳԲՏԻՔ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ դիսկուրսի լուսաբանման համար:

ԼԻԼԻԹ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ԳՈՐԾԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ Է

ՀՀ քաղաքացի Լիլիթ Մարտիրոսյանը, ով հանդիսանում է “Իրավունքի կողմ” իրավապաշտպան հասարակական կազմակերպության նախագահը, 2019թ ապրիլի 5-ին ելույթ է ունեցել ՀՀ ազգային ժողովում «Մարդու իրավունքների ազգային օրակարգ. ՄԱԿ-ի համընդհանուր պարբերական դիտարկում» թեմայով խորհրդարանական լսումներում: Նրա ելույթից հետո, բազմաթիվ անձինք սկսեցին ատելության խոսքի հանրային դրսևորումները և սպանության ապառնալիքները Լիլիթ Մարտիրոսյանի նկատմամբ, նշելով, որ նա տրանսգենդեր է և իրավունք չունի ելույթ ունենալ ՀՀ ազգային ժողովում:

Լիլիթ Մարտիրոսյանը 06.04.2019թ.-ին ՀՀ ոստիկանության Երևան քաղաքի Կենտրոնի բաժին ներկայացրել է հաղորդում, որ իր կողմից մարդու իրավունքների վերաբերյալ ՀՀ Ազգային Ժողովում ելույթից հետո «ՍԱՍ» սուպերմարկետների ցանցի առաքիչը համացանցում իր ֆեյսբուքյան էջի միջոցով անօրինական կերպով հրապարակել է իր անձնական տվյալները, այն է՝ իր բնակավայրի հասցեն: Մասնավորապես, «ՍԱՍ» սուպերմարկետների ցանցի առաքիչը, ով Լիլիթ Մարտիրոսյանի պատվերով սնունդ էր առաքել վերջինիս, տեսնելով, որ սնունդ պատվիրողը Լիլիթ Մարտիրոսյանն է, հրապարակել էր վերջինիս հասցեն իր ֆեյսբուքյան էջում, ինչպես նաև բոլոր ցանկացողներին պատրաստակամություն էր հայտնել տրամադրել Լիլիթ Մարտիրոսյանի հեռախոսի համարը: Միաժամանակ նույն օրը, Լիլիթ Մարտիրոսյանը հաղորդում է տվել, որ «Արծիվ 30 Արարատ մահապարտ» խումբ անվանումով անձնակազմի անդամի կողմից ստացել է սպանության և բռնության սպառնալիքներ, որը հրապարկվել է տեսանյութի միջոցով: Մասնավորապես սպառնալիքներ հնչեցնող անձը իր տեսանյութում, որը հասանելի է յութուբ կայքում տեղադրված տեսանյութի 2..52 վայրկյանին սպառնում է սատկացնել նրան և իշխանություններին հորդորում է իրեն մարդասպան չսարքել: ՀՀ ոստիկանության Կենտրոնի բաժնի հետաքննիչ Ա. Ոսկանյանի կողմից 16.04.2019թ.-ին կայացվել է որոշում՝ նյութերով քրեական գործի հարուցումը մերժելու մասին:

Նշված որոշումը բողոքարկվել է ՀՀ բոլոր դատական ատյաններում, սակայն, այն մնացել է անփոփոխ, իսկ ՀՀ վճռաբեկ դատարանն առանց քննության է թողել վճռաբեկ բողոքը:

2020թ սեպտեմբերի 9-ին Լիլիթ Մարտիրոսյանը ներկայացրել է բողոք Մարդու իրավունքների եվրոպական դատարան, խնդրելով ճանաչել Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 3, 6, 8, 13 հոդվածների խախտումը:

«ԻՐԱՎՈՒՆՔԻ ԿՈՂՄ» ԻՐԱՎԱՊԱՇՏՊԱՆ ՀԿ-Ն ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Է ԱՆՑԿԱՑՆԵԼ ԿՐԹԱՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՎԵԲԻՆԱՐՆԵՐԻ ՇԱՐՔԸ

2020թ-ի հուլիս և օգոստոս ամիսներին «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն իրականացրել է թվով 9 վեբինար, որոնցից յուրաքանչյուրին մասնակցում էին 15-20 տրանս սեքս աշխատող անձիք: Վեբինարները կրում էին կրթատեղեկատվական բնույթ, որոնք իրականացվում էին համապատասխան մասնագետների կողմից: Առաջին վեբինարն անցկացրեց «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ի փաստաբան Արթուր Մարգարյանը: Նա մասնակիցներին ներկայացրեց, թե ինչպես պետք է աշխատել ոստիկանության հետ և ինչպես պաշտպանել իրենց իրավունքները ոստիկանական բաժանմունքներում: Դասընթացի ընթացքում խոսվեց իրավունքների մասին՝ սեքս աշխատողների շրջանում բարձրացնելով իրազեկվածության մակարդակը:

Հաջորդ վեբինարների ընթացքում խոսել ենք այնպիսի թեմաներից, ինչպիսիք են սեքս աշխատողների իրավունքների պաշտպանությունը, նրանց առողջության իրավունքը և ակտիվ ներգրավվածությունը ջատագովություն իրականացնելու գործընթացներում: Վեբինարներն անցկացրել են Նորա Պետրոսյանը և Լիլիթ Մարտիրոսյանը՝ մասնակիցների հետ քննարկելով այնպիսի հարցեր, ինչպիսիք են սեքս աշխատողների նկատմամբ խտրականության նվազեցումը, անվտանգությունը և ապահովությունը համավարակի ընթացքում և դրանից հետո, սեքս աշխատողների նկատմամբ բռնության կանխարգելումը, փոխօգնության խմբեր ստեղծելու կարևորությունը և նրանց շրջանում խնդիրների վերհանումն ու լուծումը:

Վեբինարներն արդյունավետ էին մասնակիցների համար, քանի որ համավարակի շրջանում էլ ավելի են սրվել սեքս աշխատողների խնդիրները և նվազել դրանց լուծման հնարավորությունները: Չնայած նրան, որ համավարակի ընթացքում աշխատանքները մեծամասամբ իրականացվում են օնլայն հարթակների միջոցով, սակայն դա չի խանգարում «Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ին հակահամաճարակային կանոնների խիստ պահպանմամբ իրականացնել միջոցառումներ, որոնք կբարձրացնեն սեքս աշխատողների իրազեկվածությունը:

«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն շնորհակալություն է հայտնում Կենտրոնական ու Արևելյան Եվրոպայում և Կենտրոնական Ասիայում սեքս աշխատողների իրավունքների պաշտպանության կազմակերպությունների ցանցին՝ այս դժվար ժամանակաշրջանում մեր կողքին գտնվելու համար, վեբինարներն անցկացրած մասնագետներին՝ որակյալ և անհրաժեշտ տեղեկատվությամբ համայնքի հետ կիսվելու, ինչպես նաև վեբինարների բոլոր մասնակիցներին՝ ակտիվ մասնակցության, կրթվելու ու զարգանալու մոտիվացիայի և համայնքում առաջամարտիկներ դառնալու համար:

ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՇԱՐՔԸ







«Իրավունքի կողմ» իրավապաշտպան ՀԿ-ն սեպտեմբերի 14-20-ը իրականացրել է միջոցառումների շարք, որոնցից երկուսն անցկացվել են zoom օնլայն հարթակի միջոցով, իսկ մնացածը կազմակերպության համայնքային կենտրոնում՝ համակահամաճարակային կանոնների խիստ պահպանմամբ:

Սեպտեմբերի 15-ին կազմակերպության համայնքային կենտրոնում իրականացվեց հանդիպքում-քննարկում «ՄԻԱՎ/ՁԻԱՀ, սեռավարակներ» թեմայի շուրջ: Հանդիպումը նախատեսված էր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և սեռավարակների շուրջ սեքս աշխատող Տրանս ԼԳԲԻՔ+ անձանց իրազեկվածությունը բարձրացնելու և համայնքում կրթական բացը լրացնելու համար: Հանդիպումն անցկացրեց Կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը: Միջոցառմանը մասնակցում էին ավելի քան 15 սեքս աշխատող Տրանս ԼԳԲԻՔ+ անձինք, որոնք Կազմակերպության նախագահի հետ քննարկեցին մի շարք հարցեր ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և սեռավարակների վերաբերյալ: Լիլիթ Մարտիրոսյանը մանրամասն ներկայացրեց, թե ինչ է սեռավարակը, ինչպիսի սեռավարակներ գոյություն ունեն, ինչպես կանխել դրանք և որտեղ ու ինչպես կատարել հետազոտություն: Միջոցառման ավարտին Լիլիթ Մարտիրոսյանը պատասխանեց մասնակիցների բոլոր հարցերին:

Միջոցառման երկրորդ մասում իրականացվեց օնլայն հանդիպում, որի ընթացքում խոսվեց, թե ինչպես կարող ենք ջատագովություն իրականացնել առողջության իրավունքի պահպանման վերաբերյալ: Հանդիպումն իրականություն դարձավ zoom օնլայն հարթակի միջոցով: Հանդիպումը վարեց կազմակերպության համայնքի պատասխանատու Արտակ Ա-ն՝ ներկայացնելով, թե ինչ է ջատագովությունը և ինչ գործողություններ ու միջոցներ են օգտագործվում ջատագովություն իրականացնելիս: Խոսվեց նաև մարդկանց առողջության, բժշկական ծառայություններից օգտվելու և պետության պարտավորությունների մասին, որոնք պետք է իրականացվեն հանրային առողջության պահպանման համար: Արտակ Ա-ն ամփոփեց հանդիպումը՝ պատասխանելով մասնակիցների հարցերին:

Այնուհետև, սեպտեմբերի 16-ին «Իրավունքի կողմ» ՀԿ-ի համայնքային կենտրոնում իրականացվեց հերթական միջոցառումը «Մեր կարիքներն ու խտրականության դեպքերը համավարակի ընթացքում» թեմայի վերաբերյալ, որի ավարտին կազմակերպության փաստաբանը իրավաբանական խորհրդատվություն տրամադրեց միջոցառման մասնակից տրանս և սեքս աշխատող անձանց:

Միջոցառման ընթացքում բոլոր մասնակիցներն իրազեկվեցին խտրականության, դրա անուղղակի և ուղղակի դրսևորումների, խտրականությունից պաշտպանվելու մեխանիզմների, հակախտրականության օրենսդրության անհրաժեշտության մասին, այնուհետև, վեր հանելով իրենց կյանքում և համավարակի ընթացքում խտրականության դեպքերը, փորձեցին առավել քննադատորեն մոտենալ դեպքերին և լուծումներ փնտրել դրանց համար:

Միջոցառման երկրորդ մասում ակտիվ քննարկում ծավալվեց այն մասին, թե ինչ կարիքներ են ունեցել սեքս աշխատող Տրանս ԼԳԲԻՔ+ անձինք համավարակի ընթացքում: Մասնակիցները խոսեցին թե՛ հոգեբանական, թե՛ ֆինանսական, և թե՛ սոցիալական կարիքների մասին, որոնք ի հայտ են եկել արտակարգ դրության ընթացքում: Մասնակիցները կարևորեցին հատկապես կազմակերպության կողմից իրականացվող ֆինանսական և սոցիալական աջակցությունը, ավելին՝ խրախուսեցին համայնքային կենտրոնի ակտիվ աշխատանքը, որն ապահովում է Տրանս ԼԳԲԻՔ+ անձանց և սեքս աշխատողների սոցիալիզացումը և ոչ ֆորմալ կրթությունը:

Եվ իհարկե, սեպտեմբերի 18-ին իրականացվեց հերթական դասընթացը zoom օնլայն հարթակի միջոցով: Դասընթացի նպատակն էր բարձրացնել համայնքում առողջության իրավունքի, սեռավարակների կանխարգելման մասին իրազեկվածության մակարդակը:

Դասընթացը վարեց Կազմակերպության նախագահ Լիլիթ Մարտիրոսյանը, ով ներկայացրեց, թե ինչ է հորմոնաթերապիան, հորմոնաթերապիայի գործընթացի միջազգային և տեղական փորձը, ներկայացրեց դրա օրինական կարգավորումներն ու բացերը: Հանդիպման վերջում Լիլիթ Մարտիրոսյանը մանրամասնեց, թե ինչպես և որտեղ կարող են հետազոտություններ իրականացնել՝ իմանալու իրենց ՄԻԱՎ կարգավիճակի մասին, ինչպես նաև խոսեց «Իրավունքի կողմ» ՀԿ-ի կողմից մատուցվող բոլոր այն ծառայությունների մասին, որոնք ուղղված են ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի և սեռավարակների հետազոտմանը և կանխարգելմանը: Հանդիպմանը մասնակցող ավելի քան 15 Տրանս ԼԳԲԻՔ+ և սեքս աշխատող անձանց բոլոր հարցերին տրվեց համապարփակ պատասխաններ:

«Իրավունքի կողմ» ՀԿ-ի միջոցառումներին ու իրադարձություններին կարող եք հետևել ֆեյսբուքյան հարթակի, ինչպես նաև վեբկայքի միջոցով:

RIGHT SIDE

HUMAN RIGHTS DEFFENDER NGO

www.RightSideNGO.com

rightsidengo@gmail.com

facebook.com/RightSideNGO/

twitter.com/RightSideNGO

instagram.com/RightSideNGO/

+374 - 11 - 880 - 770

©Ամսագրի հեղինակային իրավունքները պատկանում են «Իրավունքի Կողմ» ՀԿ-ին: